II

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՈՒՄ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

V–XVIII դարերի հայ բազմահարուստ պատմագրության ազգաբանական ուսումնասիրությունը կարող է բացահայտել մեր ժողովրդի անցյալ կյանքը, ոգին, կենցաղագրական ողջ պատկերը: Այդ տեսակետից ուշագրավ է V դ. ամենանշանավոր պատմագիրներից Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» կամ «Բուզանդարան պատմությունք» խորագիրը կրող երկը, որ պարունակում է ազգագրական առատ նյութ՝ 330–387 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի՝ Տրդատի որդի և հաջորդ Խոսրով Կոտակից սկսած մինչև Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև[1]: Այն բացառիկ տեղ և արժեք ունի հայ պատմագրության մեջ: Ճշմարտապատում ու եզակի սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Պատմության բնագիրը հրատարակվել է մի քանի անգամ: Աշխարհաբար թարգմանությունն իրականացրել է Ստ. Մալխասյանցը[2]:

Բուզանդի պատմությունը բաժանվում է վեց դպրությունների կամ գլուխների, որոնցից, սակայն, մեզ են հասել չորսը՝ առաջին երկու գլուխները չկան, պատմությունը սկսվում է 3-րդ դպրությունից և ավարտվում վեցերորդով: Ժամանակագրական առումով Բուզանդի երկը շարունակվում է այնտեղից, ուր վերջանում է Ագաթանգեղոսի պատմությունը: Բուզանդի երկը, փաստորեն, առաջին փորձն էր հայ պատմագրության մեջ գրելու իրադարձություններով լի մի ժամանակաշրջանի ամբողջական պատմությունն իր ամենաբազմազան կողմերով: Գրավոր աղբյուրների բացակայության պայմաններում, բնականաբար, նա պետք է դիմեր նաև բանավոր ավանդությանը:

V դարում ապրող մարդկանց հիշողության մեջ ավանդաբար շարունակել են պահպանվել IV դ. պատմական և մշակութակենցաղային հարցերին վերաբերող շատ ավանդություններ, որոնցից, անշուշտ, օգտվել է Փավստոս Բուզանդը: Ստ. Մալխասյանցը հեղինակի հայ լինելը հաստատող փաստարկներ բերելիս նշում է այն հանգամանքը, որ Բուզանդի պատմության

համար աղբյուր են ծառայել ժողովրդական ավանդությունները կամ վեպը, շեշ-

---

[1] *Տե՛ս Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:*

[2] *Տե՛ս Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987 (երկից բերվող մեջբերումներն այս հրատարակությունից են):*

տում է, որ նա ժամանակակից չէ այն անցքերին, որոնցից ձևավորվել են ավանդությունները կամ վեպը. դրանք նա լսել է ժողովրդից, այս կամ այն ծերունու կամ գուսանի բերանից ու գրի առել[3]: Այս առթիվ Մ. Աբեղյանը հետևյալն է գրում. «Կասկած չկա, որ [Փավստոսի] գրքի գլխավոր աղբյուրները եղել են ավանդական զրույցներ, լեգենդաներ, վեպեր և նույնիսկ երգեր... իր իմացածների և բերանացի պատմածների ու լսածների հիման վրա նա հորինել է իր գիրքը՝ անխտիր գրելով ինչ որ գիտեր, լինի առասպել, թե իրական պատմական եղելություն...»: Այնուհետև շարունակելով իր միտքը՝ ավելացնում է. «Նա մեր միակ հնագույն մատենագիրն է, որի գրվածքի մեջ, որ ծագում է ֆոլկլորից, ընդարձակ չափերով անդրադարձած է մեր ժողովրդի, առանձնապես ազնվականության ներքին կյանքի իրական պատկերը, նրա բարոյական, կրոնական ու քաղաքական հայացքն իրերի վրա, նրա բնավորության որոշ գծեր, հայրենասիրությունը, սոցիալական վիճակը, նույնիսկ սովորությունները, կենցաղը, հավատալիքները և այլն: Փավստոսի պատմած ամեն մի միջադեպ ներկայացնում է այդ կյանքի շատ կողմերը միաժամանակ»[4]: Հետևաբար, նրան կարելի է համարել բանահավաքչության սկզբնավորող, պատմական ավանդությունների, զրույցների և վեպերի հավաքող, որոնց մեջ բուն պատմական տարրերը ճոխացվել են, զարդարվել ժողովրդական առասպելներով:

Ինչպես ասվեց, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» հարուստ է ազգագրական մեծարժեք նյութերով: Դրանք բազմաթիվ ու տարաբնույթ են և ընդգրկում են հայ ազգագրության գրեթե բոլոր ոլորտները՝ տնտեսական կենցաղի, նյութական մշակույթի, ընտանեկան-հասարակական կենցաղի, հոգևոր մշակույթի շատ կողմեր: Վաղ միջնադարյան հայության տնտեսական զբաղմունքներից արտացոլվել են դաշտամշակության, այգեգործության, անտառատնկման, մրգերի, անասնապահության, ձկնորսության, որսորդության, արհեստագործության, ժողովրդական փոխադրամիջոցների և այլն, նյութական մշակույթից՝ տարազի, շենքերի, վրաններ, ուտեստի վերաբերյալ հաղորդումներ: Առանձնապես ուշագրավ են հայ ժողովրդի սոցիալական հարցերի՝ ընտանեկան կենցաղի, արյունամերձ ընտանիքների խմբերի, դրանց իրավահարաբերությունների, հուղարկավորության ծեսերի, հայոց ազգակցական համակարգի, հյուրընկալման, պետական կառավարման համակարգի, ռազմական գործի, տոնածիսական համալիրների, հավատալիքների ու հեթանոսական պաշտամունքային դրսևորումների, կրոնական համակարգի և այլնին վերաբերող հավաստի ու արժեքավոր տեղեկությունները:

1. Տնտեսական կենցաղ:

1.1. Դաշտամշակություն: Այգեգործություն: *Պատմագիրը բավական հարուստ տեղեկություններ է հաղորդում հատկապես դաշտամշակության*

---

[3] *Տե՛ս Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 29:*

[4] *Տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար).– Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 193–195:*

և այգեգործության մասին: Բուզանդն իր գրքի հենց սկզբում մեծարելով Խոսրով Կոտակի թագավորության շրջանը (330–338) և Ս. Գրիգոր Լուսավորչի որդի Մեծն Վրթանեսի քահանայապետությունը՝ հիացմունքով գրում է. «Սրանց տարիներին աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի հաջողություն և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարք: Այն դարում ծաղկում էին նաև իրավունքն ու արդարությունը» (III դպր., գլ. Գ, էջ 15): Խոսելով կաթողիկոս ընտրված Ներսես Մեծի բարի գործերի մասին՝ գրում է, թե նրա օրոք ամենքը՝ հողագործը, շինարարը, եռանդով իրենց գործն էին անում. «Բույսը աճեցրեց հնձող մշակը, սերմանողներին գործակից դառնալով և առատ արդյունք համբարեց արքայության շտեմարաններում» (IV դպր., գլ. Դ, էջ 119): Պատմագիրն արձանագրել է ոռոգման համակարգով ցորենի մշակումը, նրա նկատմամբ տարվող խնամքը, նրա մեջ աճող որոմի ոչնչացումը: Նա գրում է. «Այդ աշխատանքները կշարունակվի մինչև հունձքի ժամանակը, երբ ցորենի բերքը հնձում ու ժողովում են արքայական շտեմարաններում…» (IV դպր., գլ. ԺԳ, էջ 178–179): Փոխաբերական իմաստով նա գրում է. «Նրանց մշակող ձեռներով շատ պտղաբեր, շահավետ և օգտավետ տունկեր կտնկվին հոգևոր պարտեզում և աստծուց կօրհնվին» (III դպր., գլ. Ե, էջ 23): «Մեծ վայելուչ, քաջաբեր լի պտղով» այգիների մասին Բուզանդի մոտ շատ հիշատակություններ կան. «Մի անգամ Հոհանը անցնում էր մեկի այգիների մոտով, այգիները հետելու ժամանակն էր: Մի մարդ այգու ներսից ձայն տվեց նրան ու ասաց. «Տեր եպիսկոպոս օրհնիր մեզ ու մեր այգիները» (V դպր., գլ. Թ, էջ 409): Մի այլ առիթով ցավով է փաստում, թե պատերազմական գործողությունների վայր դարձած Հայաստանում «շատ արտեր անմշակ են մնացել, շատ այգիներ խոպանացել են…» (IV դպր., գլ. Ժ, էջ 161):

Այգեգործությանը, մասնավորապես, խաղողագործությանն անդրադառնալիս իբրև երազ, տեսիլք, գրում է. «…մի մեծ վայելուչ այգի, առատ պտուղներով լի. երեք խոզ ընկել էին այգին, մտել ու ապականում, փորփրում էին այգին: Վազների տակ շատ տեղ գետինը փորում էին, վազներն արմատախիլ անում, հողով հանդերձ դուրս էին հանում, քարուքանդ էին անում: Այգեպանները եկել աշխատում էին, բայց չէին կարողանում վնասարար խոզերը այգուց դուրս անել...» (IV դպր., գլ. Ը, էջ 153): Ակնարկներ ունի մառանում պահվող գինու կարասների մասին. «Աղքատասեր Խադ եպիսկոպոսը օգնում էր աղքատներին և դատարկում էր բոլոր կճուճներն ու ամանները, մառանի բոլոր կարասները աղքատներին բաժանելով՝ մյուս օրը գնում տեսնում էր, որ նրանք նորից լցվել են…» (IV դպր., գլ. ԺԲ, էջ 171):

Բուզանդն ուշագրավ հաղորդում ունի մինչև օրս պահպանվող Խոսրովակերտ (Խոսրովի) անտառի հիմնման մասին. «Եվ հրաման տվեց Խոսրով Կոտակ թագավորն իր զորավարին (Վաչե սպարապետին)՝ երկրից բազմաթիվ մշակներ հանել, անտառներից վայրի կաղնի բերել ու տնկել Այրարատյան գավառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչ Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ

կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի (անտառ) տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս անտառը կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ անտառ էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու անտառներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: Անտառն աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ (որսի կենդանիներ) ու գազաններ հավաքել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղեր դառնան: Վաչե զորավարն անմիջապես կատարեց թագավորի ասածները» (III դպր., գլ. Ը, էջ 33):

1.2. Անասնապահություն: *Պատմության մեջ համառոտ ակնարկ կա անասնապահության մասին: Պատմիչը հիշատակում է եզների և* ցիռերի *(վայրի էշ, ընտանի էշից ավելի մեծ, արծաթամոխրագույն մազերով) մասին (IV դպր., գլ. ԺԳ, էջ 177), ոչխարի հոտն էլ «խաշինք» է անվանել. «հովիվները անջատվեցին իրենց հոտերից և խաշինքները ցրվեցին» (IV դպր., գլ. Ե, էջ 143) կամ՝ «…Ուր որ այդ խաշինքը տանում եք՝ հովվին էլ նրա հետ տարեք. պետք չէ որ հովիվը իր խաշինքը թողնե, այլ պետք է իր կյանքը զոհե ոչխարների համար» (IV դպր., գլ. ԾԵ, էջ 267):*

Ինչպես ժողովրդական տնտեսության կարիքների, այնպես էլ հատկապես ռազմական նպատակների համար Հայկական բարձրավանդակում առաջնակարգ տեղ է գրավել ձիաբուծությունը: Վաղ միջնադարյան Հայաստանը Առաջավոր Ասիայում և Կովկասում հայտնի էր իր հռչակավոր այրուձիով՝ հեծելազորով, որը հաճախ մասնակցում էր հարևան կամ դաշնակից երկրների վարած պատերազմներին: Բուզանդից տեղեկանում ենք, որ ինչպես արքունի տունը, այնպես էլ յուրաքանչյուր առանձին «աշխարհատեր» նախարար, համաձայն «Գահնամակի», պահում էր նախատեսված քանակից ոչ պակաս թվով այրուձի: 10 հազար և ավելի այրուձի (հեծյալ) տրամադրողները կոչվում էին «բյուրավոր», իսկ հազար և ավելի հանողները՝ «հազարավոր»[5] *(III դպր., գլ. Թ, էջ 35): Մի այլ տեղ էլ գրում է, թե «Հայոց Վասակ սպարապետը արքայի հրամանով զորահանդես հանեց «վաթսուն բյուր հեծյալ, լավ զինված նիզակավոր զինվոր, միասիրտ, միաբան, հավատարիմ մարդիկ» (IV դպր., գլ. ԻԱ, էջ 215):*

Ըստ պատմիչի տեղեկության՝ Հայկական լեռնաշխարհի ավարառուների մեջ ձին մեծ տեղ է գրավել, հատկապես ռազմական տուգանքների ու տուրքերի, «նվերների» առաջնահերթ պահանջը ներկայացվում էր հայկական ձիու նկատմամբ: Բնորոշ է Բուզանդի վկայությունն այն մասին, թե

---

[5] *Ամեն մի նախարար, իր կալվածքում իր ծախսով պահում էր հեծելազոր, որին առաջնորդում էր պատերազմների ժամանակ, երբ նրան հրավիրում էր թագավորը: Այսպես. Սյունյաց իշխանը 19.400 հեծելազոր ուներ, Կադմյան իշխանը՝ 13.200. սրանք «բյուրավորներն» էին, հետո գալիս էին տասներեք իշխան, որոնք ունեին 1000 և ավելի հեծելազոր, սրանք էլ «հազարավորներն» էին: Սրանց հաջորդում են ուրիշ շատ իշխաններ՝ 500–50 հեծելազորով (տե՛ս* Հ. Շահխաթունեանց. *Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի, Բ, էջմիածին, 1842, էջ 58–59,* Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 251*):*

*ինչպես Տիրան թագավորի «հռչակավոր «*Ճարտուկ, ճանճկեն*»*[6] *ձիու առիթով, որը որպես «նվեր» է պահանջում պարսից բռնակալ Շապուհ Վարազը (Ատրպատականի մարզպանը) և մերժվում, որի պատճառով նա պատերազմի հրահրեց Պարսկաստանին՝ ընդդեմ Հայաստանի (III դպր., գլ. Ի, էջ 79–85): Այդ նույն տեղում հիշատակվում է, որ «Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին: Այդ ձին մուգ շագանակագույն և պուտպուտիկ էր, քաջությամբ լի, հոյակապ տեսքով, բոլոր ձիերից մեծ և բարձր, բոլորից զանազանվում էր աննման գեղեցկությամբ, որի նման ուրիշը չկար» (III դպր., գլ. Ի, էջ 79): Միշտ էլ հայկական ձիու նկատմամբ պարսից արքունիքում մեծ պահանջարկ է զգացվել: Այսպես, երբ պարսից բանակի լրտեսները (հրամանատարը դավաճան Մերուժան Արծրունին էր) տեղեկանում են հայոց զորավար Մանվել Մամիկոնյանի բանակի և նրա ձիերի Բագրևանդի գավառի Բագական ավանում գտնվելու վայրի մասին, դավաճան Մերուժան Արծրունին ուրախ-ուրախ պարծենալով ասում է հայոց բանակի երամակը խլելու մտադրության մասին և շտապ արշավում է երամակի գտնվելու վայրը, բայց իզուր (V դպր., գլ. ԽԳ, էջ 383): Ի դեպ, պատմիչը անվարժ, կամակոր ձիուն անվանել է* տրմուղ *(V դպր., գլ. ԽԳ, էջ 389):*

1.3. Ձկնորսություն: *Բուզանդի երկում ուշագրավ է պետական ձկնորսարանի ու ձկնորսության մասին ակնարկը: Հիշատակվում է Առեստ ավանում Բերկրի փոքր գետակի վրա արքունական ձկնորսարանը (III դպր., գլ. Ը, էջ 35): Այն գտնվում է Վանա լճի հյուսիս-արևելքում, որտեղ լճից ձկներն արուների ուղեկցությամբ գնում են ձկնկիթ թափելու, որի ժամանակ էլ նրանց որսում են մեծ քանակությամբ և աղելով վաճառքի հանում (խոսքը Վանի հայտնի տառեխ ձկան մասին է): «Արքունի» բառը ցույց է տալիս, որ այդ ձկնորսարանը Արշակունի թագավորների սեփականությունն էր, որոնք որոշ տուրք էին ստանում որսալու իրավունք տալու համար (ծանոթ. 24, էջ 422): Երկում ակնարկ կա Վանա լճի ձկան առատության և անգամ «մեծ կուտակներով»՝ մեծ քանակությամբ Աղթամար կղզին թափվելու մասին (IV դպր., գլ. Զ, էջ 147): Մեկ այլ առիթով բերում է ճգնավոր երանելի սուրբ Եպիփանի անեծքը՝ կապված ձկան համար երկու եղբայրների ողբերգական կռվի դեպքի հետ, ըստ որի՝ «Մամուշեղ գետի մոտ մի աղբյուր կար, որի ակունքից շատ ձուկ էր դուրս գալիս, և շատ մարդիկ այդ ձկները բռնում օգտվում էին: Մի անգամ երկու եղբայր ձկան պատճառով իրար հետ կռվեցին, և մեկը մյուսին սպանեց: Երբ Եպիփանը այս բանը լսեց՝ ասաց. «Այսուհետև ոչ ոք այստեղից ձուկ չուտե»: Եվ իսկույն այդ տեղի ձուկը դառնացավ, լեղիի նման դառնալով մինչև այսօր, և ոչ ոք մինչև այսօր այդ տեղից ձուկ չէ որսում» (V դպր., գլ. ԻԷ, էջ 339):*

1.4. Որսորդություն: *Վաղ միջնադարյան Հայաստանում ազնվականական*

---

[6] *«Ճարտուկ» պահլավերեն բառ է, որ նշանակում է «բծավոր սպիտակ գույնով, որ է ճանճկեն», սևի զարնող գույն, կարմրավուն ձի, կարմրի զարնող, մուգ շագանակագույն (Հր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, III, Երևան, 1977, էջ 194): «Ճանճկեն», ճանճի բառից, նշանակում է ճանճի նման մանր սև բծեր ունեցող, խայտաբղետ ճանճաճերմակ (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III (Կ-Մ), Երևան, 1974, էջ 437):*

կենցաղում զինավարժության հետ սիրված զբաղմունքներից է եղել նաև որսորդությունը, որ մանավանդ խաղաղ պայմաններում կատարվել է առանձին հանդիսավորությամբ. այդ նպատակով էր, որ հայ Արշակունիները, նաև հետագա դարերում մեծ ուշադրություն է դարձվել արհեստական անտառներ տնկելու և աճեցնելու գործին: Ինչպես վերն ասվեց, հայ արքունիքում մտահոգված էին որսի արգելանոցներ ստեղծելու, այլ վայրերից այնտեղ տարբեր տեսակի վայրի կենդանիներ բերելու և բազմացնելու խնդիրներով:

Նման արգելանոցները վերնախավի կողմից վերցվում էին խիստ հսկողության տակ: Հաճախ դրանցում ընդունում էին պատվավոր հյուրերի և որս անում: Համատեղ որս անելու ուշագրավ նկարագիր է թողել Փ. Բուզանդը հայոց Տիրան թագավորի կողմից պարսից Վարազ Շապուհին (Ատրպատականի մարզպանին) հյուրընկալելու մասին խոսելիս. «Մեզ մոտ եկող հյուրերին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, – ասում է հայոց Տիրան արքան, – կերուխումով և ամեն տեսակ վայելչություններով: Բայց պետք չէ, որ նա այստեղ մեր երկրում առատ որսի տեղեր տեսնե, որովհետև պարսից ազգը չարասիրտ, նախանձոտ, չարաբարո, նենգ մարդիկ են. այլ պետք է գտնել որսով ոչ հարուստ տեղեր, որով նրան զվարճացնենք, բայց առատ որս չանենք, որսի մեծ կոտորածներ չանենք ցույցի համար, միայն ձևի համար անենք՝ պարսիկների դառնության և չարության պատճառով: Ընտրենք Ապահունյաց երկրում մեծ Մասիսի ստորոտում որսի տեղ, Աղիորսք կոչված քաղաքում» (III դպր., գլ. Ի, էջ 81–83)[7]:

Այս վկայությունից երևում է, որ Հայաստանն այնքան հարուստ էր որսի վայրերով և կենդանիներով, որ արքունիքում մտածում էին գտնել այնպիսի որսի վայրեր, որ դրանք շատ հարուստ չլինեին կենդանիներով, որպեսզի չշարժեին օտարի հետաքրքրությունն ու նախանձը: Մյուս կողմից, Տիրան թագավորի այն մտահոգությունը, որ շատ որս չանեն, շատ չկոտորեն, մատնանշում է, որ խոսքը վերաբերում է արգելանոցներին[8]: Դա առավել հստակորեն արտահայտված է Բուզանդի «պարսպապատ որսատեղի» խոսքերում: Իսկ երբ պատմագիրը բերում է Գնելի սպանությունն իրագործող Երազմակ դահճապետի կողմից Արշակ թագավորին տված զեկույցը, որոշակիորեն երևում է, որ արգելանոցները պարսպապատում էին՝ վերածելով արքունական վերնախավի որսատեղիների: Այդ առթիվ նա գրում է. «Իսկ Գնել պատանուն առնում տանում էին արքունի որսատեղի մոտ (Շահապիվանում) և գլխատում էին լեռան մի բլրի վրա, որին Լսին են ասում,

---

[7] *Բուզանդի «Հայոց պատմության» 59-րդ ծանոթագրության մեջ (էջ 427) Ստ. Մալխասյանցը գրել է. Փավստոսի մոտ «քաղաք» բառը բացի սովորական նշանակությունից հաճախ գործ է ածվում նաև պարիսպ, պարսպապատ տեղ նշանակությամբ: Ըստ այդմ՝ Աղիորսք քաղաքը պետք է հասկանալ՝ պարսպապատ, որսատեղ, նման Խոսրովակերտին: Ապա ավելացնում է. «Քանի որ այս տեղը գտնվում էր Ապահունիքում, Տուրուբերան նահանգում՝ ապա Մասիսը չէր կարող լինել Այրարատյան դաշտի հայտնի Ազատ-Մասիսը, այլ ինչպես կարծում է Էփրիկյանը («Բնաշխարհիկ բառարան», էջ 101) Միփան-Մասիք՝ մեծ և գեղեցիկ լեռը»:*

[8] *Այս մասին տե՛ս նաև Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Որսորդությունը Հայկական լեռնաշխարհում ըստ հայ պատմիչների վկայությունների. – «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետ՝ ԲԵՀ), 1984, -1, էջ 195–200:*

որսերի արգելոցի պատի մոտ, բանակատեղի դեմուդեմ. մուրտաստանի աղբյուրի մոտ սարքված արքունի բազմոցների հանդեպ» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 189):

Ի դեպ, Բուզանդի հաղորդումներից երևում է նաև, որ որսորդությունն ուղեկցվում էր որսաշների օգտագործմամբ. «Թագավորի մոտ ուրիշ մարդ չէր մնացել, ո՛չ - հետևազոր և ո՛չ այրուձի, բայց միայն սակավաթիվ սպասավորներ, որսորդական շների պահապաններ, ճանապարհների մշակներ, վրանապահ, խառնիճաղանջ պահնորդներ, ռամիկ սպասավորներ» (III դպր., գլ. Ի, էջ 83):

Եվ վերջապես, որսորդությունն ազնվականության շրջանում ռազմավարժական նախապատրաստության նպատակ էր հետապնդում: Պատերազմ մեկնելուց առաջ, երբեմն հեծյալ զորագնդին որսորդության էին մղում: Դրա համար էլ Բուզանդի հաղորդման համաձայն, «…քանզի Հայոց բոլոր գնդին ժամ էր նշանակվել որսի գնալու, այս պատճառով էլ ձիերի երամակը շեն (Բագրևանդի գավառ, Բագական գյուղ) էին բերել» (V դպր., գլ. ԽԳ, էջ 385):

1.5. Արհեստագործություն: *Բուզանդի պատմության մեջ գտնում ենք նաև արհեստների մասին ակնարկներ: Միջնադարյան Հայաստանում մետաղագործության ճյուղին պատկանող արհեստների զարգացման համար կար հումքի հարուստ բազա, որովհետև Հայկական բարձրավանդակը հարուստ էր բազմատեսակ մետաղահանքերով: Ռշտունյաց գավառում եղել են հանքեր, որտեղ աշխատում էին բանվորներ՝ շահագործելու երկաթի ու կապարի բնական հարստությունները: Ռշտունիքի Ընձաքիարս լեռը պատմիչը համարել է «երկաթահատների և կապարահատների» հանքավայր: Խոսելով Հակոբ Մծբնա կաթողիկոսի մասին, պատմում է, որ նա իր մարդկանցով ճանապարհորդելով՝ «գնաց Ռշտունիքով, հասավ երկաթահատների և կապարահատների լեռը» (III դպր., գլ. Ժ, էջ 41): Բուզանդի տեղեկություններն ի մի բերելով՝ ստացվում է, որ վաղ միջնադարյան Հայաստանում առավել զարգացած արհեստներից են եղել հանքարդյունահանությունը, դարբնությունը, զինագործությունը, դերձակությունը, մուշտակագործությունը, ոսկերչությունը, կոշկակարությունը, շինարարական արհեստները, այդ թվում՝ ճարտարապետությունը: Փավստոսը նկարագրել է Հայաստանում իշխող դասի ճոխ ու զեխ կյանքը, նրանց զինված ջոկատների զենքերի տեսակները, այն ճոխ զարդերը, որոնցով պճնվում էին իշխանական դասի կանայք և տղամարդիկ: Այդ տեղեկությունների համաձայն՝ հայոց արքունիքում կարևորվում էր ձին զարդարելու արհեստը: Այսպես, «Արշակ թագավորը …սուրբ Խաղ եպիսկոպոսին տվեց շատ ոսկի և արծաթ, արքունական ախոռից շատ նժույգներ՝ արքունական սարքերով, ոսկեղեն կրծկակալներով ու փորկապերով. սրանցով կամենում էր նրա խելքը հաճեցնել, իր կողմը դարձնել» (IV դպր., գլ. ԺԲ, էջ 171):*

Հայաստանում արհեստների մեջ կարևոր տեղ էր գրավում զինագործությունը, քանի որ երկիրը շարունակ պատերազմների մեջ էր հարևան երկրների դեմ, հետևաբար, պետք է իր սեփական արհեստագործներն ունենար: Բերենք հայ արհեստի պերճախոս ապացույց վկայող հետևյալ հատվածը, որտեղ խոսքը թագավորի սենեկապետ, երիտասարդ զինվորական Ներսեսի

(Ներսես Մեծ կաթողիկոսի) մասին է. «...զինվորական զգեստ հագած, զարդարված էր գեղեցիկ պատմուճանով և վայելուչ զարդերով..., նրա սնարքում, գոտուց կախված էր արքայական պողպատյա սուրը՝ ականակուռ մարգարտազարդ, ոսկի պատյանով» (IV դպր., գլ. Գ, էջ 111): Այս նկարագրության մեջ դժվար չէ նկատել, որ արծաթե կամ ոսկե իրերին շքեղություն էր տալիս նաև դրանց վրա ակնեղենի ընդելուզումը: Հայ պատմիչներից Փ. Բուզանդը բազմաթիվ ակնարկներ ունի իշխանական դասին պատկանող տղամարդկանց և կանանց կրած զարդերի ու զարդարանքների վերաբերյալ, հիշատակում է գեղեցիկ, ոսկե և արծաթե կամարների (գոտիների) մասին, որոնք անպակաս են եղել կանանց ու տղամարդկանց մեջքից: Երբ նկարագրում է թագավորների և իշխանների կենցաղը, նրանց նիստուկացը, նշում է «արքունական կամարը», որն ավելի ճոխ էր իշխանականից. ոսկերիչներն այդ ազնիվ մետաղները զարդարում էին թանկագին քարերով՝ «ականակապ, մարգարտազարդ ոսկի պատյանով» (IV դպր., գլ. Գ, էջ 111):

Ըստ Բուզանդի հավաստման՝ միջնադարյան հայ ոսկերիչների ձեռքով են պատրաստվել ոչ միայն արդուզարդը, այլ նաև տնային սպասքները, որոնք գործածվում էին արքայական պալատներում, իշխանական դղյակներում, խնջույքների և հյուրընկալությունների ժամանակ (V դպր., գլ. ԼԸ, էջ 375): Պատմիչը բաժակների և ափսեների համար որպես հոմանիշ գործածել է նաև այլ անվանում. այսպես, օրինակ, երբ նկարագրում է պարսից արքա Շապուհի կողմից, խնջույքների ժամանակ գործածած գավաթը, որի վրա նկարել էր տվել Մուշեղին՝ ի վարձ ասպետական վարմունքի՝ իր կանանց վերաբերմամբ, պատմիչն օգտագործում է «տաշտ» բառը (V դպր., գլ. Բ, էջ 290–293):

Բուզանդի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հայ ոսկերիչների ձեռքով պատրաստվում էին ականակուռ թագեր, խույրեր, գոտիներ (կամարներ), արծաթե և ոսկե բաժակներ, ափսեներ, դաշույններ, դաստակներ և այլն: Թագավորների ու իշխանների պատվերով ազնիվ մետաղները զարդարում էին նաև թանկագին քարերով, փղոսկրով և այլ նյութերով (V դպր. գլ. ԼԲ, էջ 355, գլ. ԼԸ, էջ 375 և այլն):

Երկում թվարկված են նաև զենքի մի շարք տեսակներ՝ «սուսերավորք», «նիզակավորք», «վաղրավորք», «սակրավորք», «սվինավորք» և «սպարակիրք» (դպր. IV, գլ. ԺԵ, էջ 186, 187), բոլորն էլ երկաթյա, պողպատյա զենքեր, որոնց թվին պետք է ավելացնել «սլաք», «տեգ», «թուր», «աղեղ», «զրահ», «սաղավարտ» և այլն: Ըստ պատմիչի՝ «հայոց լավ սպառազինված բանակը բաղկացած էր ընտիր ռազմիկ մարդկանցից, արիասիրտ կռվողներ, որոնք զինված էին նիզակներով, սրերով, աղեղներով, վաղրերով, սակրերով, անսխալ խփող և ուժեղ նետաձիգներ, ախոյանների առաջ տեղի չտվող կռվողներ, ամբողջ հեծելազորքը պահպանակներով, զրահավորված սաղավարտներով պաշտպանված, իրենց դրոշներով, նշաններով և բազմաձայն պատերազմական փողերով» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 187, գլ. Ի, էջ 205): Այսպես, Մանվել Մամիկոնյանի սաղավարտն ունեցել է արծվի տոհմական նշան: Բուզանդը գրում է, որ Մերուժանն իր սաղավարտի վրա նշան չուներ՝ անճանաչելի լինելու և իր զինվորներից

չտարբերվելու համար: Ի դեպ, սաղավարտի վրա նշան ունենալու մասին տեղեկություն է հաղորդում նաև Խորենացին, երբ խոսում է Բելի մասին[9]*:*

Միջնադարյան Հայաստանում թուրը, սուրը, սուսերը և դաշույնը մյուս զենքերի համեմատությամբ ամենից շատ տարածված և ավելի շատ գործածական զենքերն են եղել, որովհետև դրանք կիրառվել են նաև խաղաղ պայմաններում: Բացի զինվորներից՝ զենքի այդ տեսակները կրել են և ազատները՝ քաղաքացիները, լեռնցիները, իշխող դասի բոլոր ներկայացուցիչները՝ իրենց տանը և դրսում[10]*: Մարտական զենքերի շարքին են պատկանում* սակրը, վաղրը *և* ճիկոը, *որոնք պատերազմի ժամանակ կատարել են իրենց սուր բերանով ծանր հարված հասցնելու դեր: Ի դեպ,* սակրը *և* վաղրը *արտաքին շատ նմանություններ են ունեցել, բայց դրանք տարբեր զենքեր են եղել, այստեղից էլ՝ սակրավորների ու վաղրավորների առանձին զորագնդերի առկայությունը հայոց բանակում: Մի այլ տեղ հիշատակում է սակրավորների զորատեսակը՝ զինված ասպարներով: Պատմիչը նրանց անվանում է ասպարակիրներ:*

Հայկական զորքի պաշտպանության հիմնական միջոցներից մեկն էլ եղել է զրահավորումը, անխոցելիությունը: Սպառազինված հայ զորքին Բուզանդն անվանել է «երկաթապատք», «զրահաւորք», «զրահապատք», «պատենազենք», «շերտաւորք» (IV դպր. գլ. ԺԹ, էջ 204–205, V դպր., գլ. ԼԷ, էջ 368–369): Պատմիչի հաղորդումներից պարզորոշ երևում է, որ զորքի թե՛ հետևակը և թե՛ հեծյալը զինված են եղել վահաններով, որով պաշտպանվում էին ոչ միայն անհատապես, այլև զինվորների առանձին խմբեր՝ վահանավորները ծանր վահաններով «ամուր բերդեր» էին պատրաստում թշնամու դեմ, որպեսզի աղեղնավորներն ազատ գործեին: Բացի սաղավարտից՝ հայ զինվորը կրել է նաև իրանը պաշտպանող զրահ, որը հասնում էր մինչև ազդրերը: Զրահի համար Բուզանդի հիշատակած «շերտավոր» բառը վկայում է, որ մետաղի շերտերը հագցվել են իրար, ըստ երևույթին, ձկան թեփուկների ձևով (V դպր., գլ. ԼԷ, էջ 369):

Պատմիչն ակնարկներ ունի կավագործ, գալատոս *(գաղատոս, այսինքն՝ քարագործ, սալահատ) և* որմնադիր *արհեստագործական մասնագիտությունների վերաբերյալ:*

1.6. Փոխադրամիջոցներ: Կապի ձևեր: *Ինչպես օտար, այնպես էլ հայ մատենագիրները չեն ներկայացրել վաղ միջնադարում այս ասպարեզում եղած իրավիճակը: Այնուամենայնիվ նրանց կցկտուր կամ հարևանցի վկայությունները հնարավորություն են ընձեռում վեր հանելու փոխադրության միջոցների մոտավոր պատկերը: Դրանցից մեկը* շքակառքերի *օգտագործումն է: Միայն տոնական շքահանդեսների և կարևոր այցելությունների ժամանակ չէ, որ հայ բարձրաստիճան անձինք օգտագործում էին շքակառքեր: Դրանցով են տեղափոխել նաև թագավորների, կաթողիկոսների ու նախարարների դին՝ մինչև գերեզմանոց: Բուզանդը հայտնում է, որ «Ամբողջ Հայոց աշխարհը ժողովվեց և մեծ պաշտամունքով, սաղմոսներով ու*

---

[9] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարությունեան, Տփղիս, 1913, էջ 38–39:*

[10] *Տե՛ս* Վ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. *Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, 1956, էջ 75:*

հոգևոր երգերով, կանթեղներով, մոմեղեններով, անուշահոտ խունկով՝ արքունական կառքով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով...» (III դպր., գլ. ԺԱ, էջ 49): Հիշատակված են նաև կառք *ու* կառափ *փոխադրամիջոցները (IV դպր., գլ. ԺԴ, էջ 183): Երկում վկայված կառափ փոխադրության միջոցը գործածված է կառք կամ ձիակառք իմաստով: Բուզանդը գրում է Վարազդատ արքայի կառափի մասին, որով արքան չորս ասպարեզ փախչում է Մանուել զորավարի հետապնդումից (V դպր., գլ. ԼԵ, էջ 369): Մեկ այլ տեղ էլ բառը հիշատակված է «արքունական կառք» ձևով (III դպր., գլ. ԺԲ, էջ 49):*

Չի հեծնելու, այն բարձելու համար անհրաժեշտ հարմարանքներ ու սարքեր մեզանում օգտագործվել են հնուց ի վեր: Մեծապես օգտագործվել են կաշվե, թաղիքե ու փայտե զանազան հարմարանքներ, որոնք մեզ չեն հասել: Այս մասին թեև աղքատիկ, բայց արժեքավոր տեղեկություն է հաղորդում Բուզանդը: Արշակ թագավորի կողմից Խադ եպիսկոպոսին տված բազմաթիվ նվերների մեջ նա նշում է նաև «Արքունական ախոռից շատ նժույգներ՝ արքունական սարքերով, ոսկեղեն կրծկալներով ու փորակապերով» (IV դպր., գլ. ԽԳ, էջ 171):

Վաղ միջնադարյան Հայաստանում, ինչպես նաև Պարսկաստանում, բացի սովորական հեծելասարքից կամ թամբից, հատկապես բարձրաստիճան կանանց տոնական կամ սովորական երթևեկության համար օգտագործում էին ավելի հարմար ու շքեղագույն այլ ձիասարքեր կամ գրաստասարքեր, որոնք կոչվում էին ժանվար, անդրուար, դեսպակ, գահավորակ, պատգարակ *և այլն: Սրանք տեղափոխվում էին երկու եղանակով՝ միագրաստ և երկու գրաստի միջոցով: Միագրաստ փոխադրության լավագույն ու հարմար միջոց էին* ժանվարները*: Այսպես, նկարագրելով Բագավանում նշվող եկեղեցական շքեղ տոնահանդեսներից մեկը՝ Մեծ Հովհաննես (Մկրտչի) հիշատակի տոնը, «որին եկել էր (նաև) աշխարհական մարդկանց մեծ բազմություն, և զանազան գավառներից՝ շատ եպիսկոպոսներ», Բուզանդը վկայում է, որ արքայազն Գնելի «կինը նույն վաշտի մեջ էր իր ամուսնու հետ և եկել էր իր ժանվարով» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 187): Մեկ այլ տեղ նկարագրելով Գնելին սպանելու նպատակով Արշակ թագավորի բանսարկությունները՝ պատմիչը գրում է, որ Նավասարդի տոնը Շահապիվանում անցկացնելու համար թագավորի հրավերով Գնելի կինը՝ Փառանձեմը «(Գնելի) հետ էր գալիս* ժանվարով»[11] *(III դպր., գլ. ԺԵ, էջ 187): Ըստ Ստ. Մալխասյանցի՝ դա երկու օթոց էր, որ կախում էին գրաստների երկու կողքից, որոնց մեջ նստում էին մարդիկ կամ էլ բեռներ փոխադրում (ծանոթ. 109, էջ 432): Ուշագրավ է Բուզանդի մեկ այլ վկայություն ևս, որ հայերը ոչ միայն լավ ծանոթ են եղել ժանվարին ու նրա օգտագործմանը, այլև տիրապետել են դրա պատրաստման հմտությանը: Նա հաղորդում է, որ հայոց զորքի կողմից գերված պարսից արքայի կանանց համար Մուշեղ զորավարի կողմից հրամայվեց «ժանվարներ պատրաստել*

[11] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 277:*

և նրանց բոլորին ազատ արձակել» (V դպր., գլ. Բ, էջ 291)[12]*:*

Այս և նման վկայությունները ցույց են տալիս, որ վաղ միջնադարում հայոց արքունիքում և առհասարակ վերնախավի համար որպես փոխադրամիջոց են ծառայել բարձր ճաշակով ու հմտությամբ կառուցված շքակառքերը («յոսկիապատ կառան», «արքունական կառք» և այլն), որոնք չպետք է շփոթել երկանիվ ռազմակառքերի հետ: Վերոհիշյալ շքակառքերը եղել են ինչպես երկանիվ, այնպես էլ քառանիվ, որոնք, ինչպես ասվեց, բարձրաստիճան անձանց կողմից օգտագործվել են շքահանդեսների ժամանակ, հյուր գնալիս և հեռավոր ճամփորդություններ կատարելիս[13]*:*

Փ. Բուզանդն ուշագրավ վկայություններ է թողել նավարկության, ջրային տրանսպորտի մասին. «Վաչե սպարապետը նավ նստեց ու կղզին (Աղթամար) մտնելով առհասարակ ո՛չ էգ թողեց, ո՛չ արու» (III դպր., գլ. Ը, էջ 35):

Վկայություններ կան թշնամիների կողմից ճանապարհին չմոլորվելու, այն հիշելու և զորքի քանակը որոշելու նպատակով քարակույտերով ուղենիշներ՝ նշանակներ *թողնելու մասին: Խոսելով Հայաստան կատարած մասկութների ավերիչ արշավանքի մասին՝ պատմիչը գրում է. «Նրանց անթիվ բազմությունը եկավ անցավ իր սահմանը, Մեծ Կուր գետը, ու սփռվեց ու լցրեց Հայոց աշխարհը: Թիվ չկար նրա հեծյալ գնդերի բազմության և ոչ հաշիվ կոպալավոր հետևակ զորքի, որովհետև իրենք էլ չէին կարողանում իրենց զորքը համարել: Բայց երբ մի նշանավոր երևելի տեղ էին հասնում և հանդես էին կազմում ըստ գնդերի, դրոշակների և վաշտերի՝ հրամայում էին, որ ամեն մի մարդ ձեռքին մի քար բերեն, մի տեղ ածեն, կույտ կազմեն, որպեսզի ինչքան որ լինի՝ նրանով էլ հասկացվի բազմության չափը, և ապագայի համար մնա անցած օրերի այս ահավոր նշանը: Եվ որտեղից որ անցնում էին՝ այդպիսի նշաններ էին թողնում ճանապարհների խաչվող տեղերում, պողոտաների վրա» (III դպր., գլ. Է, էջ 29):*

Այդ նույն կարգով տարածված էր ճամփորդներին ճանապարհի ճիշտ ուղղությունը ցույց տալու, մատնանշելու համար պայմանական նշանների կիրառումը: Քարաշատ Հայկական լեռնաշխարհում այդ նպատակով աչքի ընկնող տեղերում նշանկաներ էին կանգնեցնում: Զմռանը, սպիտակ ձյունածածկույթի մակերեսին երևացող այդ սև քարե բարձր կույտերը՝ «բուրգերը», ճամփորդների համար ծառայում էին որպես ուղենիշ ճանապարհացույցներ: XX դարի սկզբներին ազգագրագետներն ու ճանապարհորդները ևս արձանագրել են ուղենիշ «քարի շարքեր» թողնելու մասին:

Երբեմն թշնամու և կասկածելի մարդկանց համար հայ տեղաբնիկների կողմից ճանապարհներին տրվում էին մոլորեցնող անվանումներ: Ահա այդպիսի մի դրվագ է նկարագրում պատմիչը, երբ Մերուժան Արծրունին տեղացիներին է դիմում, թե՝ «Ո՞ր տեղով է ճանապարհը գնում դեպի Բագրևանդ:

---

[12] *Տե՛ս նաև Լ. Պետրոսյան. Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ (պատմաազգագրական ուսումնասիրություն).– «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 6, Երևան, 1974, էջ 148–149:*

[13] *Տե՛ս նաև Լ. Պետրոսյան. Հայ ժողովրդական փոխադրամիջոցները ըստ մատենագրության. – ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, -9, էջ 39–48:*

... պատասխանեցին ու ասացին. «Եղջյուրներով»: Մերուժանը շատ շփոթվեց այս պատասխանից ու տրտմեցավ. սակայն հրաման տվեց՝ [տեղացի] ուղևորներին սաստիկ քարշել ու ծեծել» (V դպր., գլ. ԽԳ էջ 385): Ըստ երևույթին՝ Մերուժանը «Եղջյուրներ» բառը չէր հասկացել իբրև լեռների հատուկ անուն, այլ այդ որակումը ընդունել էր՝ իբրև ձախորդության գուշակություն, վտանգի սպառնալիք կամ էլ՝ իրեն մոլորեցնող պատասխան: Հնարավոր է, որ այս բառը Մերուժանը ընդունել է որպես արհամարհանք և վիրավորանք, որի պատճառով և ծեծել է տալիս ուղևորներին:

Երկում որոշ տեղեկություններ է հաղորդվում մարդկանց իրազեկման միջոցների մասին: Խոսք կա հրապարակներում բարձր ձայնով ազդարարների, լրաբերների, լրատարների՝ «մունետիկների», «գուժկանների» (տխուր լուր բերողների), «բազմաձայն պատերազմական փողերի» դերակատարությունների մասին (IV դպր., գլ. Ի, էջ 205, գլ. ԺԲ, էջ 169, V դպր., գլ. ԽԴ, էջ 385):

1.7. Չափ ու կշիռ: *Ուշագրավ են ժամանակի և տարածության չափի միավորների մասին Բուզանդի հաղորդած տեղեկությունները: Ըստ նրա՝ երկարության չափի միավորներից է եղել* փարսախը*: Փարսախ կամ* հրասախ *՝ երկայնության չափ է, հավասար 5250 մետրի*[14]*: Երկարության չափի միավոր է նաև* ասպարեզը*: Խոսելով Մանվել զորավարի և Վարազդատ արքայի միջև ծավալված պատերազմի մասին՝ պատմիչը գրում է, թե Մանվելը «Նիզակի կոթովը ծեծում էր Վարազդատ թագավորի կառափը, և այսպես քշում էր չորս ասպարեզ» (V դպր., գլ. ԼԷ, էջ 369): Պարսկերեն* ասպարեզ *բառացի նշանակում է ձիարշավ, ձիընթացարան, այսինքն՝ հրապարակ, որտեղ ձի էին քշում: Այն միաժամանակ գործածվել է նաև իբրև երկայնության չափ՝ հավասար է ձիընթացարանի երկայնությանը, որը հավասար էր 230,112 մետրի*[15]*: Երկայնության չափի միավոր էր նաև «մի քարընկեց հեռավորությունը» (III դպր., գլ. ԺԴ, էջ 63): Երկայնության փոքր չափի միավորներ են հիշատակված* քիլը *և* թիզը*. «Երկինքը թզով չափեց և բոլոր երկիրը՝ քիլով» (V դպր., գլ. Դ, էջ 301): Քիլը թզից փոքր, բացված ձեռքի բութ մատի ծայրից մինչև ցուցամատի ծայրն էր, որը համարվում էր հավասար ութ մատնաչափի հաստության: Բուզանդն ակնարկ ունի նաև ոսկու և արծաթի ծանրության չափի միավորներից* դանգ*-ի վերաբերյալ: Դանգը փոքր ծանրության չափ է՝ երկու գարու կշռով*[16]*:*

2. Նյութական մշակույթ*:*

2.1. Տարազ: Հագուկապ: *Բուզանդի երկում կան հագուստի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ, որոնք սոցիալական տարբեր զբաղմունքների տեր մարդկանց բնութագրող ցուցիչներ են: Այսպես, օրինակ՝ «պատմուճան» (IV դպր., գլ. Գ, էջ 111), «հանդերձ կղերիկոսաց» (կրոնավորի) (IV դպր., գլ. Գ, էջ 112–113), «պարեգոտ»՝ «գոտի». «…մի կին (Ռշտունյաց տիկին Համազասպուհու դայակը) մի կարճ պարեգոտ*

---

[14] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 491:*

[15] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 273:*

[16] *Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. I (Ա–Ե), Երևան, 1969, էջ 467:*

հագավ, որին ասում էին անակյուղոս *(կարճասրունք պատմուճանի տեսակ), մեջքը գոտի կապեց…» (IV դպր., գլ. ԾԹ, էջ 277), «դրաստ» (երկայն վերնազգեստ) և «վարտիք» (V դպր., գլ. Զ, էջ 312-313), «մոյկ»[17], «կոշիկ» (V դպր., գլ. Զ, էջ 313), «սամոյր» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 186–187), «մաշկահանդերձ» (VI դպր., գլ. Զ, էջ 404–405):*

Հայ պատմիչներից մասնավորապես Փ. Բուզանդն է հաստատում արքայական ազնիվ կտորից ծիրանագույն պատմուճանների գործածության մասին: Այսպես, Արշակ Բ թագավորին բանտից դուրս բերելու առթիվ Դրաստամատի կազմակերպած ճաշկերույթը նկարագրելիս՝ նա գրում է. «Եվ Դրաստամատը արքունական հրովարտակով փուշտիպանի հետ գնաց Անհուշ բերդը, տեսավ իր բնիկ տիրոջ, Արշակին, արձակեց ձեռների և ոտների երկաթե կապանքներից և վզի շղթաների ծանրությունից, նրա գլուխը լվաց, լողացրեց. նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար…» (V դպր., գլ. Է, էջ 319)[18]:

Իշխանական զգեստի մասին խոսելիս պատմիչը գրում է, թե տոհմիկ ազնվականությունը հագնում էր «պատվական պատմուճան» (III դպր., գլ. ԻԱ, էջ 91): Նիկիո մեծ ժողովին անդրադառնալիս (որին հայերի կողմից մասնակցում էր Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը)՝ նկատում է, թե Բյուզանդիայի Կոնստանդիանոս կայսրը «քուրձ էր հագել իր ծիրանի պատմուճանի տակ» (III դպր., գլ. Ժ, էջ 43): Ծիրանի տակ քուրձ հագնելը Բուզանդը մեկնաբանում էր Քրիստոսի նկատմամբ կայսեր տածած սիրով և ջերմեռանդ հավատով:

Բուզանդը բավական հանգամանալից խոսք ունի հայ ռազմիկի հագուկապի վերաբերյալ. «Նրան (Հովհան եպիսկոպոսին) պատահեց մի անծանոթ աշխարհական մարդ պատանի հասակով, ձի հեծած, մեջքին սուր կապած, գոտուց թուրը կախած, մեջքին աղեղ ու կապարճ, մազերը լվացած, օծած, կոկած, գլխին վարսակալ դրած, ուսին լոդիկ *(վերնազգեստ) ձգած» (V դպր., գլ. Ը, էջ 407):*

Ահա թե ինչպես է պատմիչը նկարագրում Ներսես Մեծ կաթողիկոսին՝ զինվորական եղած ժամանակ: Արշակ թագավորի հրամանով նրա վրայից հանում են «սուրը արքունական կամարով, որը կրում էր իբրև սենեկապետ՝ թագավորին սպասավորելիս… խուզում են նրա գանգուր վայելուչ վարսերը… պատառում, վրայից հանում են վայելուչ պատմուճանը: Թագավորի հրամանով բերին կրոնավորի զգեստներ ու նրան հագցրին» (IV դպր., գլ. Գ, էջ 113): Մեկ այլ տեղ իբրև իշխանական պատիվ է *ներկայացված* պատվական պատմուճանը. *«Հրաման տվեց (պարսից Շապուհ արքան – Ռ. Ն.)՝ պատիվը նրանից (դավաճան Շապուհ Վարազից – Ռ. Ն.) առնել, պատվական պատմուճանը վրայից հանել և մեծամեծ չարչարանքների*

---

[17] *Մոյկ – ըստ «Նոր Հայկազյան բառարանի»՝ «ոտնաման, հողաթափ, ագանելիք, կոշիկ» (տե՛ս, հ. 2, Երևան, 1981, էջ 296), «մինչև ծունկը հասնող կոշիկ, ճիզմէ» (տե՛ս Հր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. III, էջ 344):*

[18] *Ագաթանգեղոսը նշում է, որ հայոց թագավոր Տրդատ Գ-ն Հռիփսիմե կույսին արքունիք բերելու համար նրան ուղարկում է «ոսկիապատ գահաւորակս», նաև «հանդերձ ազնիւս» (տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1914, էջ 90), իսկ Խորենացին էլ գրում է, թե ինչպես է Տրդատը հրամայում Աշխենին «զգեցուցանել ծիրանիս» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 226):*

ենթարկել…» (III դպր., գլ. ԻԱ, էջ 91):

*Բուզանդը հավաստում է նաև հայ-պարսկական քաղաքական ու ռազմական հարաբերությունների մի շրջանի մասին, երբ պարսից արքա Շապուհ II և հայոց արքա Արշակ II միջև հաստատվել էին այնպիսի սերտ հարաբերություններ, որ երկու արքաներն ընդունելությունների ժամանակ զգեստավորվում էին միանման: Հարկ ենք համարում այդ մեջբերումը ներկայացնել ամբողջությամբ. «Պարսից Շապուհ թագավորը իր մոտ է հրավիրում հայոց Արշակ թագավորին և նրան մեծարում պատվով ու փառքով, ոսկու և արծաթի շատ գանձով, թագավորական ամեն տեսակ մեծություններով: Նրան փայփայեց ինչպես իր եղբորը, ինչպես իր որդուն, նրան պարգևեց երկրորդական մեծ տունը (Նկատի ունի պարսից արքային պատկանող մեծ կալվածքը Ատրպատականում): Ատրպատական աշխարհում ուրախության ժամանակ նրանք մի թախտի վրա էին բազմում գահերում, միևնույն գույնի և միևնույն նշաններով ու զարդերով միատեսակ զգեստ էին հագնում. ամեն օր միատեսակ թագ էր պատրաստում պարսից թագավորը իր համար և նրա համար, ինչպես երկու հարազատ եղբայրներ նրանք անբաժան իրար հետ էին լինում ուրախությունների ժամանակ և անպատմելի ուրախություններով լիանում էին» (IV դպր., գլ. ԺԶ, էջ 195–197): Հայոց արքայի նկատմամբ այս մեծապատիվ վերաբերմունքը, հագուկապի մասին հաղորդումները վկայում են, որ Արշակ II օրոք Հայաստանն անկախ ու զորեղ պետականություն ուներ: Վկայություն կա նաև Արշակ թագավորի կողմից ընտիր մորթեղենի գործածության մասին. «…*սամուրենին *գլխին քաշած, երեսը ծածկած (Գնելի սպանության պահին) մտավ խորանի (իր սենյակի) քունջը (անկյունը) և քնած ձևանալով, որպես թե նրա խոսքերը չէ լսում» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 187):*

Պատմիչը նկարագրում է նաև Պապ թագավորի ռազմական հանդերձանքը. «Ընթրիքի ժամանակ Պապ թագավորը հրաման տվեց՝ Դղակ մարդպետին փառավոր զգեստ հագցնել. նրան հագցրին դրաստ *և վարտիք: Զգեստը չափից դուրս մեծ էր, որ ծալ-ծալ իջնում էր ներքև, այնպես որ չէր կարողանում կարգին հագնվել, որովհետև մեծ զգեստը փաթաթվում էր վրան: Այս մեծ պատմուճանը հագնելով՝ մեջքին կապեց գոտին, որից թուրը կախված էր, և սուրը մեջքին կապեց. իսկ զգեստի գոտիից ծալքը իջնելով ծածկում էր թուրն ու սուրը: Վարտիքը և մույկը հագնելուց հետո* նրանը *(հավանաբար սրի կարճ տեսակ) ազդրին կապեց…» (V դպր., գլ. Զ, էջ 313):*

Մեկ այլ տեղ Բուզանդը գրում է, որ պարսից արքան իր նախարարներից Սուրենի ձեռքով Մանվել զորավարի Զարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ և պատմուճան *(երկար զգեստ, զարդարուն զգեստ, պարեգոտ) ու թագավորական* վառ *(զարդարուն քող, ասեղնագործած զարդարուն արքայական դրոշակ, զարդ՝ խույրի, գլխանոցի կամ սաղավարտի) և երկու մանուկների՝ Արշակի ու Վաղարշակի համար՝ թագեր: Մանվել սպարապետի համար ուղարկեց թագավորական* պատմուճան*, մի* սամույր *(շատ արժեքավոր մորթե մուշտակ) և գլխի* պատիվ՝ *ոսկուց և*

արծաթից շինված գարգմանակ[19], *և գլխի պատվի վրա՝ գագաթում, արծիվի ետևից, թագի կապը՝* աշխարավանդ հանգույցը *(հանգուցաձև կապված ժապավեն, բանտ) և կուրծքին պատիվ՝* ապիզակ *(կրծքի զոհարազարդ), ինչպիսին կրում էին թագավորները, նաև՝ շիկակարմիր* խորան *(զարդ), խորանի վրա արծվի նշան և մեծամեծ* սրահակներ *(մետաքսյա վարագույր) ու կապուտակ երկնագույն հովանոցներ: Նաև՝ սեղանի ոսկի սպասք (V դպր., գլ. ԼԸ էջ 375):*

Պատմիչն ակնարկներ ունի կերպասեղենի, ոսկե, արծաթե և մարգարտյա զարդեղենի մասին (IV դպր., գլ. Ի, էջ 203): Կանանց և տղամարդկանց կողմից որպես զարդ գործածվել է մատանին: Ինչպես գիտենք, հնուց ի վեր, բացի զարդ լինելուց, մատանին գործածվել է նաև որպես կնիք, որով հաստատում էին պետական-քաղաքական նշանակություն ունեցող հրամանագրերը, փաստաթղթերը, նամակները: Այս սովորությունը հանդիպում է աքեմենյան և սասանյան արքաների մոտ, որոնք ունեն նաև «Վարազ նկարագիր մատանի» (IV դպր., գլ. ԾԳ, էջ 255):

Բուզանդը երկում ակնարկներ ունի նաև կրոնական դասի զգեստի վերաբերյալ: Դանիել քորեպիսկոպոսի հագուկապը նկարագրում է այսպես. «Զգեստ էր կրում, մաշկեղեն նափորտ *(հունարեն բառ է և նշանակում է վերարկու, շուրջառ) և* սանդալներ *(III դպր., գլ. ԺԴ, էջ 61): Մի այլ դեպքում էլ կրոնավորների զգեստին անդրադառնալիս հիշատակում է «մաշկանափորին», «մաշկավարգան», «մաշկապարճան» զգեստի տեսակը, որը, ըստ երևույթին, գործածվել է շուրջառ, վերարկու իմաստով:*

Հոգևոր հայրերի զգեստավորվելու, սնվելու մասին Բուզանդը գրում է. Փավստոս եպիսկոպոսը «…շրջում էր լեռներում և անապատներում մաշկեղեն («մաշկահանդերձ») հագած, բանջարեղենով կերակրվելով մինչև իր մահվան օրը» (VI դպր., գլ. Զ, էջ 405): Մի այլ տեղ արձանագրում է, թե Աղբիանոս եպիսկոպոսի սերնդից, Մանազկերտ գյուղից մի եպիսկոպոս՝ չարագործ, նախանձոտ վարքի տեր Զավեն անվամբ մի մարդ, «սովորություն մտցրեց իր ժամանակ – նա բոլոր քահանաներին սովորեցրեց զինվորական զգեստ հագնել: Նրանք թողին առաքելական եկեղեցիների սովորությունը, և սկսեցին վարվել՝ ինչպես իրենց խելքը կտրում էր, որովհետև քահանաներն այլևս չէին հագնում պճղնավորներ՝ ինչպես ի բնե սովորություն էր, այլ սկսեցին խոտոր կտորներ գործածել մինչև ծնկները» (VI դպր., գլ. Բ, էջ 401): Այնուհետև պատմիչը շարունակում է. «Իրենց զգեստները զարդարում էին տեսակ-տեսակ նարոտներով փքվում, սիգանում էին անվայել կերպով, և քահանաներն անխտիր գործ էին ածում մեռած գազանների մորթեր, որ նույնպես վայել չէր: Ինքը՝ Զավենը հագնում էր պճնված զարդարուն զգեստներ նարոտներով (գույնզգույն թելերից ոլորած հաստ թել), ժապավինված, սամուրի, կնգումի (սպիտակ աքիսի), գայլի մորթեր էր հագնում, աղվեսի մորթ վրան էր ձգում, և այսպես անխտրաբար բեմ դուրս գալիս

[19] *Ստ. Մալխասյանցը բացատրում է, թե բնագրից այնպես է հասկացվում, թե գարգմանակը ոսկուց ու արծաթից շինված արծիվ էր, որը գլխի (սաղավարտի կամ խույրի) վրա կրում էին իբրև գլխի պատիվ կամ զարդ: Գործածվել է նաև իբրև թագավորական դրոշակ (տե՛ս Փ. Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն, ծանոթ. 211, էջ 443–444):*

նստում: Որկրամոլ, ագահ, անառակ կյանք էր վարում Զավենը իր բոլոր օրերում» (VI դպր., գլ. Բ, էջ 403): Նկատենք, որ կրոնավորի հիմնական արտաքին զգեստը, որ հիշատակում է պատմիչը՝ պճղնավոր *զգեստն է:* Պճղնավորը *երկար զգեստ՝ փարաջան էր, որ մինչև պճեղները՝ ոտների կոճերն էր հասնում: Սա էր հոգևորականների արտաքին զգեստը, որի պատճառով Հայր մարդպետը հոգևորականներին ծաղրելով՝ նրանց* կանանցազգեստ, կանանցահանդերձ *է կոչել (IV դպր., , գլ. ԺԴ, էջ 180–181): Նկատենք, որ հագուկապի մեջ էր մտնում նաև* խոտորկտորը՝ *զինվորական զգեստի տեսակը, որի հետևի քղանցքից մինչև ծնկները կտրած էր լինում, որպեսզի վազելուն չխանգարեր: Երևի կազմված է «խոտոր» և «կտրել» բառերից, այսինքն՝ շեղակի կտրած*[20]*:*

Բուզանդի երկում հանդիպում ենք նաև մի հաղորդման, ըստ որի՝ Փառեն հայրապետի որդին՝ Հոհան եպիսկոպոսը «կոշիկներ չէր հագնում, այլ ամառը (ոտներին) հեսկ *էր փաթաթում, իսկ ձմեռը՝* կեմ» *(VI դպր., գլ. Ը, էջ 407):* Հեսկը *փոկերից հյուսված ոտների խսիրե փաթաթան էր, իսկ* կեմը՝ *խոտից ոլորված չվան: Գրեթե այս նույնը XIX դարում և XX դարի սկզբներին գործածում էին Սասունում, միայն ոչ թե խսիրից, այլ այծեմազ թաղիքից, որը կոչվում էր* խարուկ*: Այծեմազ թաղիքին կաշվի հատկություն տալու համար նրա միջով անց էին կացնում կանեփաթել և երեսպատում նույն կանեփաթելի հյուսվածքով: Ստացված թաղիքը դիմանում էր անգամ սրի հարվածին ու զրահաշապիկի դեր կատարում*[21]*:*

2.2. Բնակավայր և բնակարան: *Բուզանդը գյուղական բնակավայրերը գյուղ և* շեն *է անվանել (III դպր., գլ. ԺԴ, էջ 61), իսկ ոչ բնակեցված վայրերը՝* անապատ*, ուր մենակյաց կյանք էին վարում կրոնավորները: Բուզանդը ուշագրավ նկարագրություն է թողել անապատական կյանք վարողներից Գինդ անվամբ հոգևորականի և նրա աշակերտների բնակության, կենցաղի, հագուկապի մասին. «Նրանք հրաժարվել էին աշխարհից և բնակում էին անապատներում, հաստատվելով քարանձավներում, այրերում և երկրի ծերպերում. մի զգեստ ունեին նրանք, շրջում էին բոպիկ ոտներով, զգաստ կյանք էին վարում, կերակրվում էին խոտերով, ընդեղեներով, արմատներով, գազանների նման շրջում էին լեռներում, մաշկերով և այծի մորթերով ծածկված, նեղվում, տառապում, չարչարվում էին, անապատում մոլորված ենթարկվում էին ցրտի և տոթի, քաղցի և ծարավի՝ աստծո սիրո համար» (VI դպր., գլ. ԺԶ, էջ 415):*

Երկում հատուկ վկայություն կա անապատականների բնակության տեղերի մասին. «...թռչունների երամների նման նրանք բնակվում էին ժայռերի ծակերում, քարանձավների ծերպերում, առանց գույքի և ստացվածքի, առանց խնամքի և դարմանի, մարմնի մասին ամենևին չհոգալով» (VI դպր., գլ. ԺԶ, էջ 415): Այդ նույն կերպ մատնանշում է հոգևորականների բնակության՝ «գետնի մեջ փորված խցիկ» բնակարանը: Պատմիչը գրում է, թե գետնի մեջ փորված բնակության խցիկի մեջ էր ապրում սուրբ Դանիելը, որտեղից էլ կատարում էր իր տեսչական այցելությունները (III դպր., գլ. ԺԴ, էջ 63): Հիշատակված է Գրիգոր Լուսավորիչի բնակված տեղը՝

---

[20] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. II, էջ 403:*

[21] *Տե՛ս Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004, էջ 53:*

Եփրատ գետի ակունքները, ժայռերի խորշերը (VI դպր. գլ. ԺԶ, էջ 415):

Ակնարկներ կան զինվորական կացարան-վրանների մասին: Արշակ II թագավորի զորանոցները նա այսպես է նկարագրել. «Գնում տեսնում էին, որ զորանոցը դատարկ էր, մեջը մարդ չկար, որովհետև (զորքերը) թողել էին իրենց խորաններն ու վրանները, հովանոցներն ու սրահակները, բազմոցներն ու անկողինները, կահկարասիքը և սարքերը, մինչև անգամ իրենց գանձերը» (IV դպր., գլ. Ի, էջ 211): Պատմագիրը, ցավոք, շատ հակիրճ է անդրադարձել արքունական պալատի և այլ շինությունների կառուցվածքին, տեսքին: Միայն մեկ անգամ հիշատակում է, թե «Պապ թագավորի տան նրբանցքը երկայն էր և լույսի համար շատ երդիկներ ուներ» (V դպր., գլ. Զ, էջ 313): Գուցե արքայական պալատի երդիկավոր երկայն նրբանցքն է նկատի ունեցել անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, որ Ազգագրության պետական թանգարանի (Սարդարապատ) շենքի լուսավորությունը իրականացրել է նմանատիպ երդիկներով: Երկայն նրբանցքից բացվում էր սեղանատան դուռը, և առանձին դռնով՝ հանդերձատունը, որտեղ կատարվում էր թագավորների թագադրությունը (V դպր., գլ. Զ, էջ 315):

Բուզանդը հանգամանորեն ներկայացնում է արքունի և նախարարական տների կահույքի տեսակները, պետական դրոշները, նշանները, պատիվները: *Նա հիշատակում է «արքունական գահույք»-ի (գահի) մասին. «Նրան [Ներսես Մեծին] հիրավիրեց [Պապ թագավորը] իր ապարանքը Եկեղյաց գավառի Խախ ավանում. նրա համար ընթրիք պատրաստեց, աստծու մարդուն աղաչեց, որ արքունական գահույքը բազմի» (V դպր., գլ. ԻԴ, էջ 331): Մի այլ տեղ ներկայացված է «տախտ գահուն», այսինքն՝ եռակողմ թիկնակներով, գորգերով ու բարձերով թախտ-գահավորակներ, որ հայոց կենցաղում պահպանվեց մինչև անգամ XX դարի 50-ական թվականները:*

Բուզանդն ակնարկներ ունի վաղ միջնադարյան Հայաստանում վերնատների գոյության վերաբերյալ. «…վայ նրան, որ տուն է շինում ոչ արդարությամբ և վերնահարկ է կառուցանում՝ ոչ իրավունքով»: Խոսվում է նաև բազմահարկ, գեղեցիկ ու մեծամեծ տների գոյության մասին (IV դպր., գ. ԺԳ, էջ 177):

Պատմության մեջ խոսք կա նաև զորքերի ձմեռանոց-բնակավայրերի մասին, ինչպես, օրինակ, երկրի հարավային ներքին գավառներում, մասնավորապես, պատմական Աղձնիք նահանգի Անգեղտուն գավառում (IV դպր., գլ. ԻԳ, էջ 219): Մեծաքանակ զորք մի տեղում երկար ժամանակ պահելու համար պահանջվում էր զգալի քանակությամբ մթերք, որ Հայաստանում հարմար ճանապարհների և փոխադրության միջոցների բացակայության պատճառով դժվար էր հայթայթել: Ուստի զորքն այնպիսի տեղում էին պահում, որտեղ մթերքն առատ էր կամ որտեղ նախօրոք ամբարված էր բավականաչափ մթերք: Այդպիսի ձմեռանոց բնակավայրերը հատկապես անհրաժեշտ էին հեծելազորին: Որովհետև անկարելի էր հարյուրավոր փթերով խոտ կուտակել և փոխադրել հեծելազորի կանգնա տեղերը, ուստի ավելի հարմար էին գտնում հեծելազորը ձմեռվա ամիսներին տանել այնպիսի տաք վայրեր, որտեղ ձիերը կարողանային դաշտերում արածել:

Պատմիչն այդ տեղերը կոչել է «համբարանոցներ» ՝ ամբար, շտեմարան նշանակությամբ: Այդպիսի մի շտեմարան էր նաև Արշարունյաց գավառը, ուր Արշակ II հրամանով կառուցվեց Արտագերս ամրոցը, որին հատկացվեց նշված գավառը «իբրև համբարանոց ՝ ուտելիքի համար, որովհետև այդ բերդը շատ ամուր էր» (IV դպր., գլ. Դ, էջ 203):

Նկատենք, որ հայ այլ մատենագիրների կողմից որպես այդպիսի ձմեռանոցներ կամ հեծելազորի կայաններ («կայանք զօրացն») են հիշատակվում՝ Արարատյան դաշտավայրում հատկապես Գառնին, Արտաշատի շրջակայքը, Երամոնսը, Օշականը, Արմավիրը, Յոլակերտը, Արագածոտնում՝ Կուաշ (այժմ՝ Կոշ) ավանը, Արուճը, Աշնակը, նաև Ուտիքի որոշակի շրջաններ, Դրասխանակերտը, Վարդանաշատը, Փառախորը, Սարդյանքը, նաև Լոռվա, Սյունիքի, Տուարածատափի, Վասպուրականի, Բարձր Հայքի և այլ շրջանների սիզավետ շատ արոտավայրեր[22]:

Բուզանդի երկում բավական հիշատակություններ կան եկեղեցական շինարարության մասին: Այսպես, «Աշտիշատում էր, որ առաջին անգամ եկեղեցի էր շինված, որովհետև նա էր Հայաստանի մայր եկեղեցին և նախնյաց եկեղեցական ժողովների ժողովատեղը» (IV դպր. գլ. Դ, էջ 119): Ներսես Մեծի օրոք շինվում էին ավերված եկեղեցիները, վերականգվում էին կործանված սեղանները[23] (IV դպր., գլ. Դ, էջ 117): Պատմիչը հիացմունքով է գրում Վրթանեսի որդի ՝ Հուսիկի եղբոր ՝ Գրիգորիս եպիսկոպոսի շինարարական գործունեության մասին: Վերջինս «Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոսն էր. երբ սա իր պաշտոնն ընդունեց ՝ դեռ մանուկ հասակում շինեց և նորոգեց այն կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Ատրպատականի կողմերի գավառները» (III դպր., գլ. Գ, էջ 25):

2.3. Ուտեստ: *Բուզանդը «յուտեստ» ձևով է գործածում «սնունդ» բառը (IV դպր., գլ. ԻԳ, էջ 213): Նա մի առիթով հիշատակում է մրգատեսակների և բոստանային մշակաբույսերի մասին: Պարսից շահին բազմաթիվ ծառայություններ մատուցելու դիմաց Դրաստամատին ՝ քուշանների դեմ պատերազմի ժամանակ Շապուհ արքային մահից փրկած, մեծամեծ քաջություններ կատարած հայ զորավարին, իրավունք է տրվել այցելել բանտարկված Արշակ արքային և ուտելիքներով ճոխ հյուրասիրել: Պատմիչը գրում է. «...նրան բազմեցրեց, նրա առաջ թագավորավայել ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես թագավորների կարգն էր, նրան զվարթացրեց, մխիթարեց և նվագարաններով ուրախացնում էր»: «Երբ* աղանդերի *(դեսերտի) հերթը հասավ, նրա առաջ դրին միրգ – խնձոր, վարունգ և ամիճ, ու դանակ տվին, որպեսզի կտրի և ուտի ինչպես կամենում է» (V դպր., գլ. Է, էջ 319): Հիշատակված* ամիճը *որսի մսից պատրաստված ուտելիք էր: Բուզանդը հավաստում է, որ ընթրիքին անապակ գինի ճաշակելը սովորույթ էր ազնվականության համար (V դպր., գլ. ԻԴ, էջ 331): Մեկ այլ տեղում պատմիչը գրում է, որ հյուրընկալությունների ժամանակ կազմակերպված ճաշկերույթին պարտադիր մատուցվում էր ընտիր գինի, իսկ հյուրասիրությունն էլ ուղեկցվում էր գուսանների երգասացությամբ և զվարճություններով (V դպր., գլ. ԼԲ,*

---

[22] *Տե՛ս Ե ղ ի շ ե. Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 78–80:*

[23] *Խոսքը քրիստոնեական տաճարներում բեմի վրա կառուցված բարձր ու անշարժ սեղանի մասին է, որի վրա քահանան պատարագ էր մատուցում: Այն ծառայում էր նաև իբրև գոհեր մատուցելու հարմարանք ՝ զոհարան (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. IV (Յ–Ֆ), Երևան, 1980, էջ 284):*

էջ 355, 361): Ըստ Բուզանդի՝ Ներսես Մեծի հետ աղքատները միշտ ուրախանում էին. «իր (Ներսես Մեծի) սեղանատունն ու սեղանը միշտ բաց էին աղքատների՝ օտարականների և հյուրերի համար» (IV դպր., գլ. Դ, էջ 123):

Ի դեպ, մի այլ առիթով հիշատակվում է բարձրաոտ ճաշի սեղան, որ բացառիկ վկայություն է, քանզի վաղ միջնադարում ճաշի սեղանի առկայության հիշատակություն գրեթե չունենք. «Նրանք (Հուսիկ կաթողիկոսի երկու զավակները) Պապն ու Աթանագինեսը եպիսկոպոսանոցում նստած ուտում-խմում էին, ուրախություն էին անում (անառակ պահվածքի համար)՝ տիրոջ կամքով սպանվում են և ճաշի սեղանի տակ ընկած մնացին» (III դպր., գլ. ԺԹ, էջ 77): Հիշատակվում են նաև ուտելիքների ամբարման համար գործածված կճուճներ, ամաններ, մառանի կարասներ (IV դպր., գլ. ԺԲ, էջ 171): Ժլատ տեղեկություններ կան նաև ճգնավորի կյանք վարող կրոնավորների միայն բանջարեղեններով, արմտիքներով ու խոտաբույսերով կերակրվելու մասին (III դպր., գլ. ԺԴ, էջ 61):

Այսպիսով՝ Փավստոս Բուզանդի երկում գրանցված են ազգագրական ակնարկներ վաղ միջնադարյան հայության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի ամենաբազմազան ու տարաբնույթ կողմերի վերաբերյալ: Դրանք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ և ունեն աղբյուրագիտական կարևոր նշանակություն:

ЭТНОГРАФИЧЕСКИЕ СВЕДЕНИЯ В «ИСТОРИИ АРМЕНИИ» ПАВСТОСА БУЗАНДА

РАФИК НАГАПЕТЯН

Резюме

Содержащиеся в «Истории Армении» историка V в. Павстоса Бузанда этнографические сведения относятся к ведению хозяйства, организации быта, к разным сторонам материальной культуры армян в раннем средневековье. Эти сведения вводятся в научный оборот впервые и имеют важное источниковедческое значение.

ETHNOGRAPHIC INFORMATION IN PAVSTOS BUZAND'S "THE HISTORY OF ARMENIA"

RAFIK NAHAPETYAN

Summary

Ethnographic information presented in "The History of Armenia" by the 5th century historian Pavstos Buzand, concerns the economy, the organization of everyday life, different aspects of material culture of Armenians in the Early Middle Ages. This information is in the scientific circulation for the first time and is of great importance for source study.